Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մարմարաշեն գյուղի «Մարմարիկ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի Դաստիարակի /1.25 դրույքաչափ/,թափուր հաստիքի համար:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Մրցույթը տեղի կունենա ս/թ. դեկտեմբերի 30-ին՝ ժամը 10:00–ին:

Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք գ. Մարմարաշեն, Երևան-Արտաշատ խճ. 63

Հեռ.՝ 077375380

Էլ.փոստի հասցե՝ hakobyan55.55@mail.ru